

**«ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ» ԾՐԱԳԻՐ-
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

**ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՅԵՌԱՑՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
I ՓՈՒԼ**

V ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

**ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի, Բագրատաշեն, Պտղալան,
Ջորական և Բերդալան գյուղերի
ջրամատակարարման համակարգերի բարելավում**



ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և
ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

**ԵՆԹԱԾՐԱԳԻՐ V – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

Պայմանագիր L2860 - ICB - 1- 05

**Հաշվետվություն. Սոցիոլոգիական և գենդերային հարցման
վերլուծություն (1 փուլ)**

Ծրագրի ղեկավար

Վ. Հովասապիյան

ՀԳՇՆ ՍՊԸ, նախագծի գլխավոր ինժեներ

Ա.Խաչատուրյան

Հասարակայնության հետ կապերի փորձագետ

Հ. Ասլանյան



Երևան,
Մարտ 2015թ



ՋԻՆՋ ՍՊԸ

Բովանդակություն

| | |
|---|----|
| <i>Սոցիոլոգիական հետազոտություն</i> | 5 |
| 1.1 Ենթաժրագրի տարածքում բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը | 5 |
| 1.2 Հարցման մեթոդը և ընտրանքը | 5 |
| 1.3 Հարցվածների սեռատարիքային կազմը և տնային տնտեսությունների բնութագիրը.... | 6 |
| 1.4 Տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրները..... | 7 |
| 1.5 Տնային տնտեսություններում սանիտարական պայմանների առկայությունը | 8 |
| 1.6 Ջրամատակարարման առկա իրավիճակի գնահատում | 8 |
| 1.6.1 Տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը | 8 |
| 1.6.2 Տնային տնտեսությունների միջին օրական ջրամատակարարման տևողությունը | 9 |
| 1.6.3 Բավարարվածությունը ջրամատակարարման տևողությունից և որակից | 10 |
| 1.7 Խմելու ջրի հետ կապված հիվանդությունները..... | 12 |
| 1.8 Կանանց հիմնախնդիրները, կապված ջրամատակարարման հետ | 14 |
| 1.8.1 Տնային տնտեսություններում խմելու ջրի ապահովումը..... | 14 |
| 1.8.2 Խմելու ջրի օգտագործման հիմնական նպատակները | 16 |
| 1.9 Օգտագործված ջրի դիմաց վճարումները | 16 |
| 1.9.1 Օգտագործված ջրի վարձի վճարման հաճախականությունը | 16 |
| 1.9.2 Օգտագործված ջրի վարձի չափը | 17 |
| 1.9.3 Կոմունալ ծառայությունների համար վճարումները..... | 18 |
| 1.10 Օգտագործված ջրաքանակի հաշվառման համակարգի նկատմամբ վերաբերմունքը | 19 |
| 1.11 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավմանն ու աջակցությանն ուղղված գործունեությունից տեղեկացվածություն և համագործակցություն ՀՋԿ-ի հետ | 20 |
| 1.11.1 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների տեղեկացվածությունը սպասարկման բարելավման աջակցության գործունեությունից | 20 |
| 1.11.2 Համագործակցություն ՀՋԿ ՓԲԸ-ի հետ | 20 |
| 1.12 Սոցիոլոգիական գենդերային հարցումների վերլուծության արդյունքները..... | 21 |
| <i>Հավելված 1. Սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկ</i> | 22 |
| <i>Հավելված 2. Նկարներ սոցիոլոգիական և գենդերային հարցումների, քննարկումների</i> | 25 |

Աղյուսակների ցանկ

| | |
|---|----|
| Աղյուսակ 1. Համայնքների ժողովրդագրական տվյալները և ՏՏ-ների հարցման ընտրանքը .. | 6 |
| Աղյուսակ 2. Հարցվողների սեռատարիքային կազմ..... | 6 |
| Աղյուսակ 3. Խմելու ջրից օգտվելու ձևերը..... | 9 |
| Աղյուսակ 4. Ջրամատակարարման տևողությունը | 9 |
| Աղյուսակ 5. Ջրամատակարարման ժամերն ու տևողությունը | 11 |
| Աղյուսակ 6. Ջրի որակը | 11 |
| Աղյուսակ 7. Ջրի որակի գնահատականը | 12 |
| Աղյուսակ 8. Ջրի միջոցով փոխանցվող հիվանդություններ | 13 |
| Աղյուսակ 9. Խմելու ջրի ապահովվածությունն ըստ համայնքների | 14 |
| Աղյուսակ 10. Ջրի բացակայության խնդիրներ | 15 |
| Աղյուսակ 11. Ջրի մատչելիությունը | 16 |
| Աղյուսակ 12. Ջրի օգտագործման նպատակները | 16 |
| Աղյուսակ 13. Ջրի վարձավճարումը | 17 |
| Աղյուսակ 14. Ջրի դիմաց վճարումները | 17 |
| Աղյուսակ 15. Ջրաչափ չունեցող ՏՏ-ների վերաբերմունքը նոր ջրաչափերի տեղադրմանն ու ծառայության բարելավմանը | 20 |
| Աղյուսակ 16. ՀԶԿ ՓԲԸ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը..... | 20 |
| Աղյուսակ 17. ՀԶԿ ՓԲԸ-ի հետ համագործակցությունը..... | 21 |
| Աղյուսակ 18. ՀԶԿ ՓԲԸ-ի հետ հետագա համագործակցությունը..... | 21 |

Գրաֆիկների ցանկ

| | |
|----------------|----|
| Գրաֆիկ 1 | 7 |
| Գրաֆիկ 2 | 7 |
| Գրաֆիկ 3 | 11 |
| Գրաֆիկ 4 | 14 |
| Գրաֆիկ 5 | 17 |
| Գրաֆիկ 6 | 18 |
| Գրաֆիկ 7 | 19 |

Սոցիոլոգիական հետազոտություն

1.1 Ենթաժրագրի տարածքում բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

Ենթաժրագրում ընդգրկված են Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային և Բագրատաշեն, Պտղավան, Ջորական և Բերդավան գյուղական համայնքները:

2014թվականի հունվարի 1-ի դրությամբ ծրագրում ընդգրկված Տավուշի մարզի ենթաժրագրի տարածքի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 26495 մարդ¹, որից 13211-ը կանայք են: Տավուշի մարզի ծրագրային տարածքում տնային տնտեսությունների (այսուհետև՝ ՏՏ) թիվը 5905 է: Տվյալ տարածքում դիտարկվում են բնական աճի միտումներ, մասնավորապես 2013թ. տվյալներով ծնունդների թիվը 91 մարդով գերազանցել է մահվան դեպքերին: Ծնվածների թվաքանակը կազմել է 315 մարդ, իսկ մահացածները՝ 224 մարդ:

1.2 Հարցման մեթոդը և ընտրանքը

Հետազոտության համար կիրառվել է պատահական ընտրանքի ձևը, որի միջոցով գլխավոր համակցությունից ընտրանքում ապահովվել է յուրաքանչյուր ՏՏ-ան ընդգրկման համար հավասար հնարավորություն: Ելնելով այդ սկզբունքից՝ 5 համայնքների 5905 ՏՏ-ների² հարցման ընտրանքը կազմել է 60 ՏՏ: Ընտրանքի մեջ ընդգրկվել են միայն այն ՏՏ-ները, որոնք տվյալ ենթաժրագրի իրականացման արդյունքում կհանդիսանան ուղղակի շահառուներ: ՏՏ-ների շրջանում տվյալները հավաքվել են հատուկ մշակված հարցաթերթիկի միջոցով: Հարցաթերթիկը կցվում է [Հավելված 1](#)-ում: Հարցումներն իրականացվել են հարցազրույցի եղանակով: Կիրառվել է հետազոտության և վերլուծության քանակական մեթոդներ:

Ընտրանքի մեթոդը.

ա/. տնային տնտեսություններ. Առաջին փուլում ընտրվել են ենթաժրագրի յուրաքանչյուր համայնքի այն ՏՏ-ները, որոնք տվյալ պահին հանդիսացել են ՀԶԿ ՓԲԸ-ի բաժանորդ և/կամ պոտենցիալ շահառու են լինելու ծրագրի իրականացման արդյունքում: Հետագա փուլում հետազոտվող ՏՏ-ների հաջորդական ընտրությունը կատարվել է համայնքների քարտեզների հիման վրա:

բ/. հարցվողներ /ռեսպոնդենտներ. հարցումներ անցկացվել են յուրաքանչյուր ընտրված ՏՏ-ում 18 տարին լրացած այն անդամի հետ, ով առավել տեղյակ է եղել ջրամատակարարման, ջրի որակի, պահաջարկի, կոմունալ ծառայությունների և այլ հարցերի մասին:

Կոտայքի մարզի ենթաժրագրում ընդգրկված համայնքների ժողովրդագրական տվյալները և ՏՏ-ների հարցման ընտրանքը ներկայացված են [Աղյուսակ 1](#)-ում:

¹ Ներկայացված ժողովրդագրական տվյալները տրամադրվել են քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարների կողմից:

² Ենթաժրագրի համայնքներից միայն Պտղավանն է, որի բոլոր բնակիչները (100%) կհանդիսանան ուղղակի շահառուներ, մյուս համայնքներում միայն որոշ թաղամասերում են աշխատանքներ կատարվելու, և ոչ բոլոր ՏՏ-ներն են հանդիսանալու ուղղակի շահառու:

Աղյուսակ 1. Համայնքների ժողովրդագրական տվյալները և SS-ների հարցման ընտրանքը

| | Համայնք | SS-ներ | Բնակչությունը | Կին | Հարցման ընտրանքը |
|------------------|--------------|-------------|---------------|--------------|------------------|
| 1 | ք.Դիլիջան | 3505 | 17700 | 9027 | 25 |
| 2 | գ.Բագրատաշեն | 836 | 3200 | 1448 | 8 |
| 3 | գ.Պտղավան | 310 | 1080 | 491 | 10 |
| 4 | գ.Ջորական | 354 | 1050 | 645 | 9 |
| 5 | գ.Բերդավան | 900 | 3465 | 1600 | 8 |
| Ընդհանուր | | 5905 | 26495 | 13211 | 60 |

1.3 Հարցվածների սեռատարիքային կազմը և տնային տնտեսությունների բնութագիրը

SS-ներում հարցման մասնակիցների 31.7%-ը տղամարդիկ են, 68.3%-ը՝ կանայք: Կանանց թվաքանակի գերակշռությունը հարցվող տղամարդկանց թվի նկատմամբ կարելի է բացատրել հարցման պահին տղամարդկանց զբաղվածության և այլ պատճառներով նրանց բացակայության հանգամանքներով: Նշենք նաև, որ կանայք կենցաղի և սանիտարահիգիենիկ կարիքների հետ կապված հարցերում ավելի հաճախ են առնչվում խմելու ջրի խնդիրների հետ: Սեռատարիքային կազմը ներկայացված է ստորև [Աղյուսակ 2](#)-ում:

Աղյուսակ 2. Հարցվողների սեռատարիքային կազմ

| Սեռ | Տարիք | | | | | | | | Ընդամենը | |
|-----------------|----------|-------------|-----------|--------------|-----------|--------------|------------|--------------|-----------|-------------|
| | 18-25 | | 26-40 | | 41-60 | | 60-և ավելի | | | |
| Արական | 0 | 0% | 3 | 17.6% | 8 | 27.6% | 8 | 61.5% | 19 | 31.7% |
| Իգական | 1 | 100% | 14 | 82.4% | 21 | 72.4% | 5 | 38.5% | 41 | 68.3% |
| Ընդամենը | 1 | 1.7% | 17 | 28.3% | 29 | 48.3% | 13 | 21.7% | 60 | 100% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014


Հետազոտության ընտրանքում ընդգրկված 60 SS-ների անդամների թվաքանակը կազմել է 245 մարդ, որից 39.6%-ը կանայք են, 38.0%-ը՝ տղամարդիկ, իսկ 22.4%-ը՝ մինչև 18 տարեկան անչափահասներ: Այսինքն՝ ընտրանքում ընդգրկված SS-ներից յուրաքանչյուրում միջին հաշվով առկա է 0.92 անչափահաս, իսկ չափահասների շրջանում կանայք կազմել են 51.1%: Միաժամանակ հարկ է նշել, որ հարցմանը մասնակցած SS-ների 48.3%-ում երեխաներ (մինչև 18 տարեկան անչափահասներ) չկային: Ընտրանքում ընդգրկված ընտանիքների անդամների թիվը միջինում կազմել է 4.08 մարդ: Երեխա ունեցող ընտանիքներում երեխաների միջին թիվը կազմել է 1.94:

Հարցվողներին ուղղված զբաղվածության բնույթի հարցերը ցույց են տալիս, որ նրանց 18.3%-ը պետական/համայնքային աշխատողներ են, 8.3%-ը՝ մասնավոր գործունեություն են ծավալում, 15.0%-ը զբաղված է այգեգործությամբ, հողագործությամբ և անասնապահությամբ, 41.7%-ը տնային տնտեսուհիներ են, 16.7%-ը՝ թոշակառուներ, 5.0%-ը՝ գործազուրկներ:

1.4 Տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրները

Հարցմանը մասնակցած ՏՏ-ների 29.5%-ը որպես եկամտի աղբյուր համարել են պետական և համայնքային աշխատանքի դիմաց վարձատրությունը, 24.2%-ը՝ մասնավոր գործունեությունից և գյուղատնտեսությունից ստացված եկամուտները, 35.8%-ը՝ կենսաթոշակը և նպաստները, 9.5%-ն՝ արտագնա աշխատանքից ստացված եկամուտները և 1.0%-այլ/օգնություն հարազատներից: Հարցվողների ընտանիքների հիմնական եկամտի աղբյուրը ներկայացված է տեսնել [Գրաֆիկ 1](#)-ում:


Գրաֆիկ 1



Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Հարցման մասնակիցների շրջանում հավաքված տվյալները հնարավորություն են տալիս մոտավոր պատկերացում կազմելու ՏՏ-ների միջին ամսական եկամուտների մասին: Տնտեսությունների 3.3%-ի միջին ամսական եկամուտը կազմել է մինչև 32հազ. դրամ, 18.3%-ը՝ 33-50հազ.դրամ, 36.7%-ը՝ 51-100հազ.դրամ, 41.7%-ը՝ 100հազ.դրամից բարձր: Հարցվողների ընտանիքների մոտավոր միջին ամսական եկամուտների չափի մասին կարելի է տեսնել [Գրաֆիկ 2](#)-ում:

Գրաֆիկ 2



Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

1.5 Տնային տնտեսություններում սանիտարական պայմանների առկայությունը

Ենթաժրագրում ընդգրկված համայնքների ՏՏ-ների 35.0%-ում առկա է ջրահեռացման կենտրոնացված համակարգ՝ Դիլիջան քաղաքային համայնքում: Ընդ որում կենտրոնացված կոյուղու համակարգին միացված է Դիլիջանի հարցման մասնակիցների ՏՏ-ների 84.0%-ը: Բագրատաշեն, Պտղավան, Ջորական և Բերդավան գյուղական համայնքները չունեն կենտրոնացված կոյուղու համակարգ:

Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 28.0%-ում, Բագրատաշեն և Բերդավան գյուղական համայնքների 100%-ում, Պտղավանի՝ 80.0%-ում և Ջորականի՝ 66.6%-ում բնակիչներն օգտվում են բակային զուգարաններից կամ ունեն սանհանգույցներ, որոնք միացված են սեփական տարածքում կառուցված կեղտաջրերի հավաքման ոչ սեպտիկ հորերին: Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակիցների ՏՏ-ների 80.0%-ում, Բագրատաշեն և Բերդավան գյուղական համայնքների 12.5%-ում, Պտղավանի՝ 40%-ում և Ջորականի՝ 44.4%-ում բնակիչների զուգարանները գտնվում են բնակարանում կամ տան ներսում:

Ըստ սանիտարական պայմանների առկայության՝ ՏՏ-ների 100%-ն ունի զուգարան: Հարցման արդյունքների համաձայն՝ հարցվողների ՏՏ-ների 61.7%-ի զուգարանները գտնվում են դրսում/տան բակում, 50.0%-ի զուգարանները գտնվում են բնակարանում կամ տան ներսում, ընդ որում ՏՏ-ների 11.7%-ն ունեն զուգարաններ և՛ տան ներսում, և՛ բակում:

1.6 Ջրամատակարարման առկա իրավիճակի գնահատում

1.6.1 Տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը

Համաձայն հետազոտության արդյունքների՝ ջրամատակարարման համակարգից տնային միացման ձևով խմելու ջրից օգտվում էր ենթաժրագրի հարցման մասնակից ՏՏ-ների 61.7%-ը, բակային ծորակից՝ 26.6%-ը, սեփական ջրհորից՝ 1.7%-ը, հասարակական աղբյուրից՝ 10.0%-ը: Բացի խմելու ջրից օգտվելու նշված ձևերից, ՏՏ-ների 16.7%-ը օգտվում էր նաև բակային ծորակից, հասարակական աղբյուրից՝ 28.3%-ը, աշխատանքի վայրից՝ 1.7%-ը, խմելու և կերակուր պատրաստելու համար ջուրը գնում են ՏՏ-ների 26.7%-ը:

Ջրամատակարարումն անհատական տնային միացմամբ հասանելի է Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 92.0%-ին, Բերդավան գյուղական համայնքի 50.0%-ին, Պտղավանի՝ 40.0%-ին, Բագրատաշենի՝ 37.5%-ին և Ջորականի՝ 33.3%-ին:

Բակային ծորակներից օգտվում էր Պտղավան գյուղական համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 90.0%-ը, Բագրատաշենի և Բերդավանի՝ 75.0%-ը, Ջորականի՝ 33.3%-ը և Դիլիջան քաղաքային համայնքի՝ 8.0%-ը:

Սեփական ջրհորից օգտվում էր Ջորական գյուղական համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 11.1%-ը:

Կենտրոնացված ջրամատակարարման բացակայության, ընդհատումների (ժամային գրաֆիկի դեպքերում), խափանումների և այլ պատճառներից ելնելով Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 28.0%-ը, Ջորական գյուղական համայնքի 66.7%-ը, Պտղավանի՝ 50.0%-ը, Բերդավանի՝ 37.5%-ը և Բագրատաշեն 25.0%-ը օգտվում են հասարակական աղբյուրներից:

Ջուր գնում են Բագրատաշեն և Պտղավան գյուղական համայնքների հարցման մասնակից ՏՏ-ների 50.0%-ը, Բերդավանի՝ 37.5%-ը, Ջորականի՝ 22.2%-ը և Դիլիջան քաղաքային համայնքի՝ 8.0%-ը:

Առանձին համայնքների ՏՏ-ների խմելու ջրից օգտվելու ձևերը ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Խմելու ջրից օգտվելու ձևերը

| | Համայնք | տնային միացում | բակային ծորակ | սեփական ջրհոր | հասարակական ջրհոր/աղբյուր | ջուրը գնում են |
|------------------|--------------|----------------|---------------|---------------|---------------------------|----------------|
| 1 | ք.Դիլիջան | 92.0% | 8.0% | | 28.0% | 8.0% |
| 2 | գ.Բագրատաշեն | 37.5% | 75.0% | | 25.0% | 50.0% |
| 3 | գ.Պտղավան | 40.0% | 90.0% | | 60.0% | 50.0% |
| 4 | գ.Ջորական | 33.3% | 33.3% | 11.1% | 66.7% | 22.2% |
| 5 | գ.Բերդավան | 50.0% | 75.0% | | 37.5% | 37.5% |
| Ընդհանուր | | 61.7% | 43.3% | 1.7% | 40.0% | 26.7% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

1.6.2 Տնային տնտեսությունների միջին օրական ջրամատակարարման տևողությունը

Ըստ հետազոտության տվյալների՝ ամռան ամիսներին ծրագրի տարածքի ՏՏ-ների 16.7%-ն ունեցել է միջին օրական ջրամատակարարում մինչև 4ժամ տևողությամբ, 5.0%-ը՝ 5-11ժամ, 1.6%-ը՝ 12-23ժամ, 15.0%-ն ունեցել է շուրջօրյա՝ 24ժամ: Հարցման մասնակիցների 40.0%-ը նշել է, որ ունեցել է անկանոն ջրամատակարարում, իսկ 21.7%-ի պարագայում ջրամատակարարումը բոլորովին բացակայել է:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ջրամատակարարման այդ պատկերը մի փոքր փոխվում է ձմռան ամիսներին: Համայնքների հարցվածների 15.0%-ն իրենց ՏՏ-ներում ունեցել են ջրամատակարարում մինչև 4ժամ տևողությամբ, 10.0%-ը՝ 5-11ժամ, 1.7%-ը՝ 12-23ժամ, 13.3%-ը՝ 24ժամ, 38.3%-ն՝անկանոն ջրամատակարարում, իսկ 21.7%-ը նշել է, որ ջրամատակարարումը բոլորովին բացակայել է:

Ենթածրագրի համայնքների ՏՏ-ներում միջին օրական ջրամատակարարման տևողությունը ամռան և ձմեռվա ամիսներին ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Ջրամատակարարման տևողությունը

| | Համայնք | Ամռային ամիսներին, տոկոսներով | | | | | Ձմեռային ամիսներին, տոկոսներով | | | | |
|------------------|--------------|-------------------------------|------------|------------|-------------|----------------------------|--------------------------------|-------------|------------|-------------|----------------------------|
| | | 0-4 ժամ | 5-11 ժամ | 12-23 ժամ | 24 ժամ | այլ/անկանոն, առանց ջրամատ. | 0-4 ժամ | 5-11 ժամ | 12-23 ժամ | 24 ժամ | այլ/անկանոն, առանց ջրամատ. |
| 1 | ք.Դիլիջան | 32.0 | 12.0 | 4.0 | 32.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 4.0 | 28.0 | 28.0 |
| 2 | գ.Բագրատաշեն | 25.0 | | | | 75.0 | 25.0 | | | | 75.0 |
| 3 | գ.Պտղավան | | | | | 100 | | | | | 100 |
| 4 | գ.Ջորական | | | | 11.1 | 88.9 | | | | 11.1 | 88.9 |
| 5 | գ.Բերդավան | | | | | 100 | 25.0 | 12.5 | | | 62.5 |
| Ընդհանուր | | 16.7 | 5.0 | 1.6 | 15.0 | 61.7 | 15.0 | 10.0 | 1.7 | 13.3 | 60.0 |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Ըստ առանձին համայնքների, հարցման մասնակից SS-ների միջին օրական ջրամատակարարման տևողությունը ժամային խմբավորումներով ամառային և ձմեռային ամիսների համար պարզ երևում է Աղյուսակ 4-ում: Ջրամատակարարման տևողությունը առանձին համայնքներում այլ կերպ հետևյալ պատկերն ունի.

- **Դիլիջան** համայնքում ամռան ամիսներին SS-ների 16.0%-ն ունեցել է անկանոն ջրամատակարարում՝ մինչև 4 ժամ տևողությամբ: Ձմռան ամիսներին՝ 24.0%-ն է ունեցել անկանոն ջրամատակարարում: Օրերով ջրերը սառչում են, անջատումները շատ են լինում: Ամռան և ձմռան ամիսներին ջրամատակարարում չի ունեցել SS-ների 4.0%-ը:
- **Բագրատաշեն** համայնքում ամռան և ձմռան ամիսներին 62.5%-ում ջրամատակարարումն իրականացվել է հիմնականում գրաֆիկով՝ 2-4օրը մեկ մինչև 3 ժամ տևողությամբ: Ամռան և ձմռան ամիսներին SS-ների 12.5%-ը ջրամատակարարում չի ունեցել:
- **Պտղավան** համայնքում ամռան և ձմռան ամիսներին SS-ների 100%-ում ջրամատակարարումն իրականացվել է գրաֆիկով՝ շաբաթը 2 կամ 3 օր 2-4 ժամ տևողությամբ:
- **Ջորական** համայնքում ամռան և ձմռան ամիսներին SS-ների 88.9%-ը ջրամատակարարում չի ունեցել:
- **Բերդավան** համայնքում ամռան ամիսներին SS-ների 62.5%-ն ունեցել է անկանոն ջրամատակարարում՝ 2-3օրը մեկ մինչև 2 ժամ տևողությամբ: Ամռան և ձմռան ամիսներին 37.5%-ը չի ունեցել ջրամատակարարում:

Ենթաժրագրում ընդգրկված համայնքներում ջրամատակարարման ներքին ցանցն ամբողջությամբ կամ մասնակիորեն քայքայված վիճակում է գտնվում: Այդ պատճառով հաճախ վթարներ են տեղի ունենում, ջրամատակարարումն անկանոն, ընդհատումներով է իրականացվում: Ամռան ամիսներին ջրամատակարարումն ավելի վատ է կատարվում, օրերով ջուր չեն ստանում: Ձմռան ամիսներին SS-ներից շատերում ջուրը սառչում է: Այդ պատկերը հստակորեն երևում է Աղյուսակ 4-ում:

1.6.3 Բավարարվածությունը ջրամատակարարման տևողությունից և որակից

Ծրագրում ընդգրկված համայնքների SS-ների շրջանում կատարված հարցումից կարելի է եզրակացնել, որ հարցվողների 18.3%-ը գոհ է ամառային ամիսներին ջրամատակարարման ժամերից և տևողությունից, 80.0%-ը բավարարված չէ, իսկ 1.7%-ը դժվարացել է պատասխանել: **Ձմեռային ամիսներին** ջրամատակարարման ժամերից և տևողությունից գոհ է հարցվողների 20.0%-ը, բավարարված չէ 76.7%-ը, իսկ 3.3%-ը դժվարացել է պատասխանել:

SS-ների բավարարվածությունը ջրամատակարարման ժամերից և տևողությունից տոկոսային արտահայտությամբ ներկայացված է

Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Ջրամատակարարման ժամերն ու տևողությունը

| | Արդյո՞ք Ձեզ բավարարում են ջրամատակարարման ժամերն ու տևողությունը | | |
|---------------------------|--|--------------|--------------------------|
| | Այո | Ոչ | դժվարանում եմ պատասխանել |
| Ամառային ամիսներին | 18.3% | 80.0% | 1.7% |
| բ.Դիլիջան | 36.0% | 60.0% | 4.0% |
| գ.Բագրատաշեն | 12.5% | 87.5% | |
| գ.Պտղավան | 18.3% | 80.0% | 1.7% |
| գ.Ջորական | 11.1% | 88.9% | |
| գ.Բերդավան | | 100% | |
| Ձմեռային ամիսներին | 20.0% | 76.7% | 3.3% |
| բ.Դիլիջան | 36.0% | 60.0% | 4.0% |
| գ.Բագրատաշեն | 12.5% | 87.5% | |
| գ.Պտղավան | 20.0% | 76.7% | 3.3% |
| գ.Ջորական | 11.1% | 88.9% | |
| գ.Բերդավան | 12.5% | 75.0% | 12.5% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Ինչ վերաբերում է մատակարարվող ջրի որակին տված գնահատականներին, ապա հարցվածների 5.0%-ը գնահատել է լավ՝ 4-5 ցուցանիշով: Հարցվածների 71.7%-ն իր դժգոհությունն է արտահայտել և այն գնահատել է վատ՝ 1-2 ցուցանիշ: Ըստ նրանց, մատակարարված ջուրը կեղտոտ է, ունի համ, հոտ: Անձրևից հետո խողովակներով պղտոր ջուր է գալիս, որը հնարավոր չէ խմել:

Հարցվածների 8.3%-ը՝ գնահատելով միջին՝ 3, ըստ էության նրանց բավարարել է մատակարարված ջրի որակը: Հարցվողների 15.0%-ը դժվարացել է պատասխանել:


SS-ներին մատակարարված ջրի որակի գնահատականները տոկոսային արտահայտությամբ ներկայացված են [Աղյուսակ 6](#)-ում, իսկ գրաֆիկական պատկերը՝ [Գրաֆիկ 3](#)-ում :

Աղյուսակ 6. Ջրի որակը

| Մատակարարվող ջրի որակի ցուցանիշ՝ 1-ը ամենացածրն է, 5-ը՝ ամենաբարձրը | | | | | դժվարանում եմ պատասխանել |
|--|-------|------|------|----|--------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| 46.7% | 25.0% | 8.3% | 5.0% | 0% | 15.0% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Գրաֆիկ 3
Մատակարարվող ջրի որակը (1-շատ վատ, 4-լավ)



Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Եթե ՏՏ-ներին մատակարարված ջրի որակը գնահատելու լինենք որպես վատ՝ 1-2, բավարար՝ 3, լավ՝ 4-5 ցուցանիշներով, ապա ըստ համայնքների հարցվածների գնահատականի կստացվի հետևյալ պատկերը (ներկայացված Աղյուսակ 7-ում):

Աղյուսակ 7. Ջրի որակի գնահատականը

| | Համայնք | Հարցվածների գնահատականը, տոկոսներով | | | |
|-------------------------------|--------------|-------------------------------------|------------|------------|---------------------------------------|
| | | վատ 1-2 | բավարար 3 | լավ 4-5 | դժվարանում են պատասխանել/չկա պատասխան |
| 1 | ք.Դիլիջան | 68.0 | 16.0 | 4.0 | 12.0 |
| 2 | գ.Բագրատաշեն | 87.5 | | 12.5 | |
| 3 | գ.Պտղավան | 100 | | | |
| 4 | գ.Ջորական | 22.2 | 11.1 | 11.1 | 55.6 |
| 5 | գ.Բերդավան | 87.5 | | | 12.5 |
| Ընդհանուր ենթաձրագրում | | 71.7 | 8.3 | 5.0 | 15.0 |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Վատ գնահատականին ավելի շատ արժանացրել են Պտղավան գյուղական համայնքի հարցվածների 100%-ը, Բագրատաշենի և Բերդավանի՝ 87.5%-ը, Ջորականի՝ 22.2%-ը, Դիլիջան քաղաքային համայնքի՝ 68.0%-ը: Ջորական գյուղական համայնքի հարցվածների 55.6%-ը և Բերդավանի՝ 12.5%-ը չեն պատասխանել որակի գնահատման հարցին, քանի որ այդ հարցվածների ՏՏ-ները ընդհանրապես ջրամատակարարում չեն ստացել:

Համայնքների հարցման մասնակիցներից նշել են.

ք.Դիլիջան - «կեղտոտ ջուր է գալիս՝ նստվածք, որդ, համ, հոտ: Մաքրվելու համար ֆիլտր է դրած», «անձրևաջուր ոնց որ լինի, ժանգ, ավազ, տիղմ, համ, հոտ», «պատահում է լվացքի մեքենան էլ չենք աշխատացնում ջրի շատ վատ որակի պատճառով», «անձրևների ժամանակ ջուրը բոլորովին չի օգտագործվում», «խմելու համար պիտանի չէ, օգտագործում ենք միայն կենցաղային նպատակների համար»:

գ.Բագրատաշեն - «շատ վատ որակի ջուր է գալիս՝ նստվածք, հոտ», «ամեն բան ջրի հետ գալիս է», «գտիչով մաքրում ենք ջուրը խմելու համար», «եռացնում ենք՝ փրփրում է, նստվածք է առաջանում»:

գ.Պտղավան - «նստվածք, ավազ, համ, հոտ», «Կրային ջուր է գալիս», «խմելու ընդհանրապես ենթակա չէ»:

գ.Ջորական - «կրային ջուր է, համ է գալիս»:

գ.Բերդավան - «վատ որակի ջուր է գալիս՝ ուժեղ նստվածք, ժանգ, ավազ», «ջրից վատ համ, հոտ է գալիս»:

1.7 Խմելու ջրի հետ կապված հիվանդությունները

Հարցվածների շրջանում մտահոգության տեղիք են տալիս ջրի վատ որակի և դրա միջոցով փոխանցվող հիվանդությունների հարցերը: Ուսումնասիրվել է «Վերջին տարիներին Ձեր ընտանիքում եղե՞լ են արդյոք ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների գրանցման դեպքեր» հարցի պատասխանները:

Հարցվածների 18.3%-ի ընտանիքներում պատահել են աղեստամոքսային հիվանդություններ, սակայն դրա միակ պատճառը խմելու ջուրն է թե ոչ, հնարավոր չէ պարզել: Հարցվածների ՏՏ-ների 81.7%-ում՝ հիվանդություններ չեն գրանցվել:

Ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների առաջացման դեպքերն, ըստ առանձին համայնքների հարցվածների, ներկայացված է Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Ջրի միջոցով փոխանցվող հիվանդություններ

| | Համայնք | Հարցվածների ընտանիքում ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքեր, տոկոսներով | | |
|-------------------------------|--------------|---|-------------|--------------------------|
| | | եղել են | չեն եղել | դժվարանում են պատասխանել |
| 1 | ք.Դիլիջան | 16.0 | 84.0 | |
| 2 | գ.Բագրատաշեն | 25.0 | 75.0 | |
| 3 | գ.Պտղավան | 30.0 | 70.0 | |
| 4 | գ.Ջորական | | 100 | |
| 5 | գ.Բերդավան | 25.0 | 75.0 | |
| Ընդհանուր ենթաձրագրում | | 18.3 | 81.7 | - |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Հարցվածների շրջանում ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքերն ավելի շատ առաջացել են Պտղավան գյուղական համայնքի ՏՏ-ների 30.0%-ում, Բագրատաշենի և Բերդավանի՝ 25.0%-ում, իսկ Դիլիջան քաղաքային համայնքի՝ 16.0%-ում:

Համայնքների հարցման մասնակիցներից նշել են.

ք.Դիլիջան - «ջուրը եռացնում ենք», «մատակարարված ջուրը խմել չի լինում», «օգտվում ենք հասարակական աղբյուրներից, բերում ենք մանկապարտեզից»:

գ.Բագրատաշեն - «երեխաների մոտ աղիքային հիվանդություններ է առաջացել»:

գ. Պտղավան - «եռացնում ենք», «խմելու համար ջուրը գնում ենք կամ բերում ենք հասարակական աղբյուրներից»:


Ջրամատակարարման ներքին ցանցի քայքայված վիճակի, հաճախակի վթարների և երկարատև ընդհատումների հետևանքով վատանում է մատակարարված ջրի որակը, որն էլ հնարավոր է բացասաբար ազդի ընտանիքի անդամների առողջության վրա: Բնակիչները նշել են, որ մատակարարվող ջուրն օգտագործում են եռացրած վիճակում, նաև հատուկ ֆիլտրներ, զտիչներ են օգտագործում: Հարցման մասնակիցները դրանով էլ պայմանավորում են առաջացած հիվանդությունների դեպքերը, սակայն պետք է նաև նշել այն փաստը, որ հետազոտության ընտրանքում ընդգրկված հարցվածների մեծ մասն այդ հիվանդությունների առաջացման ժամանակ չի ենթարկվել բժշկական ստուգման՝ այդ դեպքերի պատճառահետևանքային կապը ջրի որակի հետ հաստատելու համար:

1.8 Կանանց հիմնախնդիրները, կապված ջրամատակարարման հետ

1.8.1 Տնային տնտեսություններում խմելու ջրի ապահովումը

Ենթաժրագրում ներառված համայնքներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության խնդիրներից էր պարզել տնային տնտեսությունների խմելու ջրով ապահովվածության աստիճանը: Հարցման արդյունքում ստացված տվյալների վերլուծության գրաֆիկական պատկերը ներկայացված է [Գրաֆիկ 4](#)-ում:

Գրաֆիկ 4



Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Ինչպես երևում է պատկերված գրաֆիկից, ենթաժրագրում ներառված համայնքների ՏՏ-ների 40.0% -ը ապահովված է խմելու ջրով, 21.7%-ը՝ ապահովված չէ, իսկ 38.3%-ը՝ մասամբ է ապահովված:

ՏՏ-ների խմելու ջրով ապահովվածությունն՝ ըստ համայնքների, ներկայացված է [Աղյուսակ 9](#)-ում:

Աղյուսակ 9. Խմելու ջրի ապահովվածությունն ըստ համայնքների

| | Համայնք | Ապահովված էք խմելու ջրով, տոկոսներով | | |
|-------------------------------|--------------|--------------------------------------|-------------|-------------|
| | | այո | ոչ | մասամբ |
| 1 | ք.Դիլիջան | 64.0 | 4.0 | 32.0 |
| 2 | գ.Բագրատաշեն | 50.0 | 25.0 | 25.0 |
| 3 | գ.Պտղավան | | 100 | |
| 4 | գ.Զորական | 11.1 | 77.8 | 11.1 |
| 5 | գ.Բերդավան | 37.5 | 37.5 | 25.0 |
| Ընդհանուր ենթաժրագրում | | 40.0 | 21.7 | 38.3 |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակիցներից ոչել են. «ջուրը բերում ենք անտառից», «խմելու համար ջուրը կրում ենք հասարակական աղբյուրից, կամ գնում ենք»: Զորական համայնքի հարցվածների 75.0%-ը, Պտղավանի՝ 60.0%-ը, Բերդավանի՝

37.5%-ը և Բագրատաշենի՝ 25.0%-ը նշել են, որ ջուրը բերում են հարևան գյուղերից: Ջորական գյուղական համայնքի հարցվածների 22.2%-ը ջուրը կրում են դպրոցից, 11.1%-ը՝ սարից:

ՏՏ-ների շրջանում հավաքված կարծիքներից կարելի է եզրակացնել, որ հատկապես Պտղավան, Ջորական, Բերդավան, Բագրատաշեն գյուղական, մասամբ էլ Դիլիջան քաղաքային համայնքներում ոչ նորմալ ջրամատակարարման պայմանները խնդիրներ են առաջացնում կանանց համար: Անհրաժեշտության դեպքում կանայք են ջուր կրում Դիլիջան քաղաքային համայնքի հարցվածների ՏՏ-ների 48.0%-ում, Ջորական գյուղական համայնքի 33.3%-ում, Պտղավանի՝ 28.3%-ում և Բագրատաշենի՝ 12.5%-ում: Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 20.0%-ում, Բերդավան գյուղական համայնքի 62.5%-ում, Պտղավանի՝ 60.0%-ում, Բագրատաշենի՝ 37.5%-ում, և Ջորականի՝ 22.0%-ում տղամարդիկ են ջուրը բերում: Դիլիջան քաղաքային համայնքի հարցման մասնակից ՏՏ-ների 20.0%-ում, Ջորական գյուղական համայնքի՝ 44.4%-ում և Բերդավանի՝ 12.5%-ում գրեթե հավասար չափով կանայք, տղամարդիկ և ընտանիքի բոլոր անդամները զբաղվում են ջրի ապահովման խնդրով:

Հետազոտությունների արդյունքները համայնքների հարցվածների շրջանում՝ «Անհրաժեշտության դեպքում տնային տնտեսությունում ուժեղ են ջուրը կրում» հարցի վերաբերյալ, ներկայացված է [Աղյուսակ 10](#)-ում: Ենթաժրագրում ներառված համայնքների հարցվածների ՏՏ-ների 80.0%-ում անհրաժեշտություն է առաջանում ջուր կրելու: Ընդ որում նրանց 34.0%-ում ջուրը կրում են կանայք՝ դույլերով, 42.0%-ում տղամարդիկ ավտոմեքենաներով, սայլակներով, էշով և մեծ ամաններով են ջուրը բերում, 4.0%-ում՝ ջուրը կրում են երեխաները, իսկ 20.0%-ում խմելու ջուրը կրում են ընտանիքի բոլոր անդամները:

Աղյուսակ 10. Ջրի բացակայության խնդիրներ

| Համայնքների հարցվածների տվյալները, տոկոսներով | | | | |
|---|--------|-----------|-----------|--------|
| | Կանայք | Տղամարդիկ | Երեխաները | Բոլորը |
| Ընդհանուր ենթաժրագրում | 34.0 | 42.0 | 4.0 | 20.0 |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

ՏՏ-ը խմելու ջրով ապահովելու խնդիրը կանանցից խլում է մեծ ջանքեր և ժամանակ: Այսպես, հարցվածները նշել են, որ կանայք խմելու ջուրը բերում են հարևանների մոտից, հասարակական աղբյուրներից 20մ-ից մինչև 300մ հեռավորությունից, իսկ տղամարդիկ ջուրը բերում են ավելի մեծ հեռավորությունից՝ ավտոմեքենաներով: Բագրատաշեն համայնքի հարցման մասնակիցների 37.5%-ը, Պտղավանի՝ 60.0%-ը, Ջորականի՝ 22.2%-ը, Բերդավանի՝ 75.0%-ը նշել են, որ ջուրը բերում են հարևան գյուղերից՝ 1-2կմ-ից մինչև 10կմ հեռավորությունից:

Այն հարցին, թե «Մոտավորապես որք՞ան հեռավորությունից է հարկ եղած դեպքում ջուրը բերվում», հարցվածների պատասխանները ներկայացված են [Աղյուսակ 11](#)-ում:

Աղյուսակ 11. Ջրի մատչելիությունը

| Հեռավորությունը | | | | | | |
|-------------------------------|-------------|-------------|--------------|-------------|--------------|--------------|
| | մինչև 50մ | 50-100 մ | 100-150մ | 150-200 մ | 200-250մ | 250մ և ավելի |
| Ընդհանուր ենթաձրագրում | 6.7% | 6.7% | 11.7% | 3.3% | 11.7% | 41.7% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերալից հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

1.8.2 Խմելու ջրի օգտագործման հիմնական նպատակները

Հետազոտության արդյունքները, թե «ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտագործում խմելու ջուրը» հարցի վերաբերյալ ներկայացված են [Աղյուսակ 12](#)-ում:

Աղյուսակ 12. Ջրի օգտագործման նպատակները

| Խմելու և խոհանոցի համար | Կենցաղային կարիքների համար | Ոռոգման համար | Անասնապահության համար | Այլ |
|-------------------------|----------------------------|---------------|-----------------------|-----|
| 55.5% | 93.3% | 5.0% | 3.3% | 1.7 |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերալից հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Հարցման արդյունքներից երևում է, որ ամռան ամիսներին ոռոգման համար օգտագործվում է խմելու ջուրը, դրա հետևանքով էլ ավելի շատ ՏՏ-երին չի բավականացնում այն:

1.9 Օգտագործված ջրի դիմաց վճարումները

1.9.1 Օգտագործված ջրի վարձի վճարման հաճախականությունը

«Վճարում ե՞ք արդյոք սպառած ջրի դիմաց» հարցին ենթաձրագրի ՏՏ-ների հարցման մասնակիցները գլխավորապես տվել են «այո» պատասխան՝ 71.7%-ը, «ոչ»՝ 28.3%-ը:

«Ի՞նչ հաճախականությամբ եք վճարում ջրի վարձը» հարցի վերաբերյալ հավաքված կարծիքներն իրենց մեջ պարունակում են լավատեսություն, քանի որ նրանց 68.3%-ն ամեն ամիս կատարում է վճարումներ, իսկ միայն 3.4%-ն է անկանոն վճարումներ կատարում: Ընդհանրապես չվճարողների թիվը կազմել է 28.3%: Դրանք հիմնականում այն տնտեսություններն են, որոնք չունեն խմելու ջուր և այն բերում են հասարակական աղբյուրներից, հարևան գյուղերից կամ գնում են: Ջրի դիմաց վճարումներ չկատարողների կազմում Ջորական (ամբողջությամբ), Բերդավան, Բագրատաշեն գյուղական և Դիլիջան քաղաքային համայնքների բնակիչներն են: Ջրի վարձի անկանոն վճարումներ կատարողների կազմում Բերդավան և Պտղավան գյուղական համայնքի բնակիչներն են:

Տվյալ հարցի հետազոտության արդյունքներն՝ ըստ առանձին համայնքների հարցվածների պատասխանների, ներկայացված են [Աղյուսակ 13](#)-ում:

Աղյուսակ 13. Ջրի վարձավճարումը

| | Համայնք | Համայնքների հարցվածների ջրի վարձի վճարումը, տոկոսներով | | |
|------------------|--------------|--|------------|-------------|
| | | ամսական | անկանոն | չեն վճարում |
| 1 | ք.Դիլիջան | 80.0 | | 20.0 |
| 2 | գ.Բագրատաշեն | 87.5 | | 12.5 |
| 3 | գ.Պտղավան | 90.0 | 10.0 | |
| 4 | գ.Ջորական | | | 100 |
| 5 | գ.Բերդավան | 62.5 | 12.5 | 25.0 |
| Ընդհանուր | | 68.3 | 3.4 | 28.3 |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

1.9.2 Օգտագործված ջրի վարձի չափը

Վարձավճարների չափերի հետ կապված հարցի վերաբերյալ ամռան ամիսներին ՏՏ-ների հարցման մասնակիցների 58.3%-ի օգտագործած ջրի վարձը միջին ամսականում կազմել է մինչև 2000դրամ, 3.3%-ի` 4000դրամից ավելի: Ձմռան ամիսներին ՏՏ-ների հարցման մասնակիցների 65.0%-ի օգտագործած ջրի վարձը միջին ամսականում կազմել է մինչև 2000դրամ, 6.7%-ի` 2001-ից մինչև 3000 դրամ: Վճարումներ չեն կատարում ամռան ամիսներին հարցման մասնակիցների ՏՏ-ների 31.7%-ը, ձմռան ամիսներին` 28.3%-ը:

«Ամսական սպառած ջրի դիմաց որքա՞ն գումար եք վճարում» ամռան և ձմռան ամիսներին հարցին ենթաօրագրի ՏՏ-ների հարցման մասնակիցների պատասխանների հետազոտությունների արդյունքները ներկայացված են [Աղյուսակ 14](#)-ում, իսկ գրաֆիկական պատկերները կարելի է տեսնել [Գրաֆիկ 5](#)-ում:


Աղյուսակ 14. Ջրի դիմաց վճարումները

| | Վճարումները դրամով | | | | | չեն վճարում |
|------------------------|--------------------|-----------|-----------|-----------|---------------|-------------|
| | մինչև 1000 | 1001-2000 | 2001-3000 | 3001-4000 | 4000- ից ավել | |
| Ամռան ամիսներին | 13.3% | 45.0% | 6.7% | - | 3.3% | 31.7% |
| Ձմռան ամիսներին | 15.0% | 50.0% | 6.7% | - | - | 28.3% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Գրաֆիկ 5

Որքա՞ն եք վճարում ամսական սպառած ջրի դիմաց ամռան և ձմռան ամիսներին




Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Ջրամատակարարման ծառայությունների հետագա բարելավման դեպքում հարցման մասնակիցների 93.3%-ը նշել է, որ կվճարեն ըստ սահմանված վարձաչափի և ջրաչափի ցուցմունքի, 6.7%-ը նշել է, որ կվճարեն նույն չափով: Որքան գումար պատրաստ կլինեն վճարել հարցվողները ջրամատակարարման ծառայությունների բարելավման դեպքում կարելի է տեսնել [Գրաֆիկ 6](#)-ում:

Ինչպես երևում է պատկերներից, եթե ջրամատակարարման ծառայությունները բարելավվեն, ապա ջրի սպառման ծավալները և դրանց դիմաց վճարումները զգալիորեն կավելանան: Ստացված արդյունքներից երևում է, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը ջրամատակարարման ծառայությունների բարելավման դեպքում պատրաստ է խմելու ջրի համար կատարել անհրաժեշտ վճարումներ:

Գրաֆիկ 6



Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014


1.9.3 Կոմունալ ծառայությունների համար վճարումները

«Ո՞ր ծառայությունների համար եք ավելի շատ վճարում» հարցի շրջանակներում ուսումնասիրվել են հարցման մասնակիցների ՏՏ-ներում կոմունալ ծառայությունների համար կատարված վճարումները:

Ենթածրագրի համայնքների հարցման մասնակից ՏՏ-ների 26.7%-ը չունի գազամատակարարում: Հարցման մասնակիցների ՏՏ-ների 58.3%-ում ամռան և ձմռան ամիսներին էլեկտրաէներգիայի համար վճարում են համեմատաբար ամենաբարձրը: Ամռան ամիսներին ՏՏ-ների 15.0%-ում, իսկ ձմռան ամիսներին՝ 16.7%-ում, էլեկտրաէներգիայի և գազի վարձերը հավասար են: Ենթածրագրի համայնքների ՏՏ-ների 25.0%-ում ամռան և ձմռան ամիսներին գազի ծառայության դիմաց ավելի շատ է վճարվում: Հարցման մասնակից տնային տնտեսությունների 1.7%-ը ամռան ամիսներին ջրամատակարարման ծառայությունների համար է շատ վճարում:

Հետազոտության արդյունքները հաշվարկած ամռան և ձմռան միջինով՝ ըստ ենթածրագրի հարցման մասնակիցների ՏՏ-ների գազի, էլեկտրաէներգիայի և խմելու ջրի վճարումների, պատկերված են [Գրաֆիկ 7](#)-ում:

Գրաֆիկ 7



Աղբյուրը: Սոցիոլոգիական և գեոդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Ստացված արդյունքներից երևում է, որ ենթածրագրում ընդգրկված համայնքներում հարցվածներից միայն 1.7%-ն է հանրային ծառայություններից առավելագույն վճարումն իրականացնում սպառած ջրի դիմաց՝ այն էլ միայն ամռան ամիսներին:

1.10 Օգտագործված ջրաքանակի հաշվառման համակարգի նկատմամբ վերաբերմունքը

Ըստ հետազոտության արդյունքների, ենթածրագրի հարցման մասնակիցների սպառողների 48.3%-ն ունի տեղադրված ջրաչափ, իսկ 51.7%-ը չունի ջրաչափ: Համակարգի բարելավման պայմաններում ջրաչափ չունեցող ՏՏ-ների 96.8%-ը ցանկություն է հայտնել այն տեղադրել և պատրաստ է պարտաճանաչ կատարել ամսական վճարումները, 3.2%-ը՝ չի ցանկանում ջրաչափ տեղադրել: Ուսումնասիրության արդյունքները՝ «ջրաչափ չունեցող ՏՏ-ների վերաբերմունքը նոր ջրաչափերի տեղադրմանն ու ծառայության բարելավմանը», ներկայացված են [Աղյուսակ 15](#)-ում:

Մասնավորապես, ջրաչափեր չունեն Բագրատաշեն և Պտղավան գյուղական համայնքների հարցման մասնակից ՏՏ-ների 100%-ը, Ջորականի՝ 88.9%-ը, Բերդավանի՝ 12.5%-ը և Դիլիջան քաղաքային համայնքի՝ 16.0%-ը: Դիլիջան քաղաքային համայնքի և Բագրատաշեն, Պտղավան, Բերդավան գյուղական համայնքների հարցման մասնակից և ջրաչափ չունեցող ՏՏ-ների 100%-ը, Ջորականի 87.5%-ը ցանկանում է ջրաչափեր տեղադրել: Ջորական գյուղական համայնքի ջրաչափ չունեցող հարցման մասնակիցների 12.5%-ը ի վիճակի չէ ջրաչափ տեղադրել:

Բնակչության շրջանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգի նկատմամբ առկա դրական դիրքորոշումը կարող է խթանել ծրագրի տարածքում այդ համակարգի ամբողջական ներդրմանը:

Աղյուսակ 15. Ջրաչափ չունեցող ՏՏ-ների վերաբերմունքը նոր ջրաչափերի տեղադրմանն ու ծառայության բարելավմանը

| | Համայնք | Ծառայությունների բարելավման դեպքում պատրաստ եք տեղադրել ջրաչափ և պարտաճանաչ կատարել ամսական վճարումները, տոկոսներով | | |
|------------------|--------------|---|------------|-------------|
| | | Այո | Ոչ | Դժվ. է պատ. |
| 1 | ք.Դիլիջան | 100 | | |
| 2 | գ.Բագրատաշեն | 100 | | |
| 3 | գ.Պտղավան | 100 | | |
| 4 | գ.Զորական | 87.5 | 12.5 | |
| 5 | գ.Բերդավան | 100 | | |
| Ընդհանուր | | 96.8 | 3.2 | |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

1.11 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավմանն ու աջակցությանն ուղղված գործունեությունից տեղեկացվածություն և համագործակցություն ՀՋԿ-ի հետ

1.11.1 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների տեղեկացվածությունը սպասարկման բարելավման աջակցության գործունեությունից

ՏՏ-ների հարցման մասնակիցների շրջանում ուսումնասիրություններ են անցկացվել բացահայտելու համար ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների տեղեկացվածությունը սպասարկման բարելավման և աջակցության գործունեությունից: «Տեղյակ եք արդյո՞ք ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավման և աջակցության գործունեությունից» հարցի պատասխանները ներկայացված են [Աղյուսակ 16](#)–ում: Միաժամանակ այդ հարցն ինքնին ապահովում էր տեղեկատվության տրամադրում բաժանորդներին:

Աղյուսակ 16. ՀՋԿ ՓԲԸ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը

| ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավման և աջակցության գործունեություն | Այո | Ոչ |
|--|-------|-------|
| Բաժանորդների սպասարկման թեժ գծի 1-71 հեռախոսահամար | 10.0% | 90.0% |
| 81-71 կարճ հաղորդագրության միջոցով ջրաչափի ցուցմուքների փոխանցման նոր տարբերակ | 3.3% | 96.7% |
| www.armwater.am ինտերնետային կայք | 1.7% | 98.3% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

1.11.2 Համագործակցություն ՀՋԿ ՓԲԸ-ի հետ

Հարցման մասնակիցների ներկայացրած տվյալներով 20.0%-ը համագործակցում է ՀՋԿ ՓԲԸ-ի հետ: Ընդ որում նրանց 70.6%-ն ահազանգում է վթարների վերաբերյալ, 29.4%-ն ահազանգում է մատակարարվող ջրի ճնշման անկման և որակի վատթարացման մասին:

ՀՋԿ ՓԲԸ-ի աշխատակիցների հետ ՏՏ-ների համագործակցության ուսումնասիրության արդյունքները՝ ենթաօրագրի հարցման մասնակիցների շրջանում, ներկայացված է [Աղյուսակ 17](#)-ում:

Աղյուսակ 17. ՀԼԿ ՓԲԸ-ի հետ համագործակցությունը

| | |
|---|-------|
| Ահազանգում են վթարների վերաբերյալ | 70.6% |
| Սպառած ջրաքանակի մասին տեղեկացնում են կարճ հաղորդագրության կամ ինտերնետային կայքի միջոցով | - |
| Ահազանգում են մատակարարվող ջրի ճնշման անկման, որակի վատթարացման մասին | 29.4% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Հարցման մասնակիցների 80.0%-ը նշել են, որ չեն համագործակցում ՀԼԿ ՓԲԸ-ի հետ: «Կցանկանայի՞ք համագործակցել հետագայում» հարցի պատասխանները ընդգրկված են [Աղյուսակ 18](#)-ում:

Աղյուսակ 18. ՀԼԿ ՓԲԸ-ի հետ հետագա համագործակցությունը

| | Այո | Ոչ | Դժվարանում եմ պատասխանել |
|---------------------------------------|-------|------|--------------------------|
| Կցանկանայի՞ք համագործակցել հետագայում | 83.3% | 8.3% | 8.4% |

Աղբյուրը: Սոցիոլոգիական և գենդերային հարցում Տավուշի մարզում, ՀԳՇՆ, 2014

Հարցման մասնակիցների մի մասը ՀԼԿ ՓԲԸ-ի հետ հետագա համագործակցությունը չի ցանկանում, պատճառաբանելով, որ «բնակիչների ուժերով են վթարները վերացվում», «խնդիրները լուծում ենք ինքներս»: Սակայն հուսադրող է այն, որ հարցման մասնակիցների զգալի մասը պատրաստ է հետագայում համագործակցել ՀԼԿ ՓԲԸ-ի հետ:

Նշված կարծիքները կարող են օգտակար լինել ՀԼԿ ՓԲԸ-ի հետ բաժանորդների համագործակցության զարգացման և տարածքի ջրամատակարարման նախագծերի մշակման ժամանակ:

1.12 Սոցիոլոգիական գենդերային հարցումների վերլուծության արդյունքները

Սոցիոլոգիական գենդերային հարցումների վերլուծության արդյունքում առանձնացվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց պարզաբանման վերաբերյալ հանրային իրազեկման արշավի ընթացքում կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հիմնախնդիրները հետևյալն են.

- Ջրամատակարարման ապահովում
- Ջրամատակարարման տևողություն և խափանումներ
- ՕԿՋ-ների վերանորոգում
- Ջրահեռացում
- Ջրամատակարարման վարձավճար
- Ջրի որակ
- ՀԼԿ ՓԲԸ-ի հետ համագործակցության ոչ բավարար մակարդակ:

Հավելված 1. Սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկ

Social survey questionnaire

| | | | | | | | |
|---|---|---|-------------------------------------|--|------------------|--|----------------|
| 1. Հարցվողի բնակության վայրը՝ մարզ, քաղաք/ գյուղ Place of respondent's residence –marz, town/village | | | | | | | |
| 2. Հարցվողի անձնական տվյալներ Personal data of the respondent | | | | | | | |
| 2.1 Հարցվողի անուն ազգանուն Full name of the respondent | | | | | | | |
| 2.2 Հարցվողի սեռը Sex of the respondent | | | Արական Male | | Իգական Female | | |
| 2.3 Հարցվողի տարիքը Age of the respondent | | | 18-25 | 26-40 | 41-60 | 61-ից բարձր, more than 61 | |
| 2.4 Ընտանիքի անդամների քանակը Number of family members | | | 1-2 | 3-4 | 5-6 | ավելի more than 7 | |
| 2.5 Ընտանիքում անդամների քանակը ըստ սեռի Family members by gender | | | Կին Female | | Տղամարդ Male | | Երեխա Child |
| 2.6. Հարցվողի զբաղվածության բնույթը Respondent's type of employment | | | | | | | |
| Պետական/ Համայնքային համակարգի աշխատող State/ Community employee | | Մասնավոր գործնեություն Private entrepreneur | | Գյուղատնտեսություն Agriculture | | Տնային տնտեսուհի Housewife | Այլ /Other |
| 3. Ընտանիքի եկամտի աղբյուրը Family income source | | | | | | | |
| Վարձատրություն Remuneration | | Եկամուտ մասնավոր գործունեությունից/գյուղատնտեսությունից Income from private activity/agriculture | | Թոշակ/ նպաստ Pension/ social benefits | | Արտագնա աշխատանք go off in search of a living | Այլ /Other |
| 4. Ընտանիքի մոտավոր եկամուտը / ՀՀ դրամ Approximate family income / AMD | | | | | | | |
| մինչև 32 000 Up to 32 000 | | 33 000-50 000 | | 51 000-100 000 | | 100 000-ից բարձր More than 100 000 | |
| 5. Ապահովված եք արդյո՞ք խմելու ջրով Are you provided with drinking water ? | | | | | | | |
| Այո/ Yes | | Ոչ /No | | Մասամբ/partially | | | |
| 6. Ինչ՞ նպատակով եք հիմնականում օգտագործում խմելու ջուրը What is the main purpose of using drinking water? | | | | | | | |
| Խմելու և խոհանոցի Drinking | Կենցաղային կարիքների household needs | Ոռոգման Irrigation | Անասնապահության animal husbandry | | Այլ/Other | | |
| 7. Հիմնականում խմելու ջրամատակարարման ո՞ր ձևից եք օգտվում Mainly what form of drinking water supply do you use? | | | | | | | |

| | | | | | | |
|---|------------------------------|---|--|--|-------------------------------------|---|
| Տնային ծորակ In-house tap | Բակային ծորակ In-yard tap | Փողոցային ծորակ Public tap | Սեփական ջրհոր Bore well of public use | Հասարակական ջրհոր/աղբյուր Public borewell/spring | Ջուրը գնում են Purchase of water | |
| 8. Միջին օրական ջրամատակարարման տևողությունը Average daily water supply duration | | | | | | |
| 8.1 Ամառային ամիսներին Summer | | 0 – 4 ժամ hour | 5 – 11 ժամ hour | 12 – 23 ժամ hour | 24 ժամ hour | Այլ /Other |
| 8.2 Ձմեռային ամիսներին Winter | | | | | | |
| 9. Արդյո՞ք Ձեզ բավարարում են ջրամատակարարման ժամերն ու տևողությունը Are you satisfied with water supply hours and duration? | | | | | | |
| 9.1 Ամառային ամիսներին Summer | | Այո/ Yes | | Ոչ /No | | Դժվարանում են պատասխանել Difficult to answer |
| 9.2 Ձմեռային ամիսներին Winter | | Այո/ Yes | | Ոչ /No | | Դժվարանում են պատասխանել Difficult to answer |
| 10. Անհրաժեշտության դեպքում ՏՏ-ում ովքե՞ր են ջուր կրում /Who brings water if required | | | | | | |
| Կանայք / Women | | Տղամարդիկ / Men | | Երեխաները / Children | | Բոլորը / Everybody |
| 11. Մոտավորապես որքա՞ն հեռավարությունից է հարկ եղած դեպքում ջուրը բերվում / What is the distance of the source of brought water | | | | | | |
| Մինչև 50մ Up to 50m | 50-100 մ/մ | 100-150մ/մ | 150-200մ/մ | 200-250մ/մ | Այլ /Other | |
| 12. Վճարում եք արդյո՞ք սպառած ջրի դիմաց Do you pay for consumed water? | | | | | | |
| Այո/ Yes | | Ոչ /No | | Դժվարանում են պատասխանել/ Difficult to answer | | |
| 13. Սպառած ջրի դիմաց միջինում ամսական որքան գումար եք վճարում – ՀՀ դրամ How much do you pay per month for consumed water? | | | | | | |
| Ամառային ամիսներին Summer | | | Ձմեռային ամիսներին Winter | | | |
| 14. Ինչ հաճախականությամբ եք վճարում ջրի վարձը What is the frequency of paying water bill? | | | | | | |
| Ամսական / Per month | | Անկանոն/ Irregularly | | Չեն վճարում/ I do not pay | | |
| 15. Ջրամատակարարման ծառայությունների բարելավման դեպքում ամսական որքա՞ն եք պատրաստ վճարել – ՀՀ դրամ How much are you ready to pay in case of improving water supply services/AMD? | | | | | | |
| _____ ՀՀ դրամ/AMD | | | | | | |
| 16. Տեղյակ եք արդյո՞ք ՀՀԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավմանն և աջակցությանն ուղղված գործունեությունից Are you informed on the AWSC activities directed at improvement and support provided to the customers? | | | | | | |
| Բաժանորդների սպասարկման թեժ գծի 1-71 հեռախոսահամար/ Customers service hot line 1-71 | | 81-71 կարճ հաղորդագրության միջոցով ջրաչափի ցուցմունքների փոխանցման նոր տարբերակ/ New option on providing water meter readings through the message 81- 71 | | armwater.am ինտերնետային կայք/ armwater.am web site | | |
| Այո/ Yes | Ոչ /No | Այո/ Yes | Ոչ /No | Այո/ Yes | Ոչ /No | |

| | | | |
|--|--|---|---|
| 17. Արդյո՞ք համագործակցում եք ՀՋԿ-ի հետ Do you cooperate with AWSC? | | | |
| Եթե այո, ապա նշեք ստորև բերված տարբերակներից մեկը If Yes, mention one of the following options | | Եթե ոչ, ապա կցանկանայի՞ք համագործակցել հետագայում If No, are you willing to cooperate in the future ? | |
| Ահազանգում եք վթարների վերաբերյալ/ Informing about accidents | Սպառած ջրաքանակի մասին տեղեկացնում եք կարճ հաղորդագրության կամ ինտերնետային կայքի միջոցով/ Informing on consumed water through message or website | Ահազանգում եք մատակարարվող ջրի ճնշման անկման, որակի վատթարացման մասին/ Informing about pressure fall of supplied water, quality decrease | Այո/ Yes Ոչ, պատճառը/ No, the reason Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer |
| 18*. Սովորաբար, ՏՏ-ում ով է ահազանգում ջրի հետ կապված խնդիրների վերաբերյալ / Who alarms on the water issues in the household? | | | |
| Կանայք/ Women | | Տղամարդիկ/ Men | Այլ /Other |
| 19. Ունե՞ք արդյոք ջրաչափ Do you have a water meter installed? | | | |
| Այո/Yes | | Ոչ /No | |
| 20. Ծառայությունների բարելավման դեպքում պատրաստ եք տեղադրել ջրաչափ և պարտաճանաչ կատարել ամսական վճարումները Are you ready to install water meter in case of improving water supply services and pay regularly? | | | |
| Այո/Yes | | Ոչ /No | Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer |
| 21. Արդյո՞ք Ձեզ բավարարում է ջրամատակարարման ծառայության որակը / Are you satisfied with water services provided? | | | |
| Այո/Yes | | Ոչ /No | Դժվարանում եմ պատասխանել / Difficult to answer |
| 22.Արդյո՞ք Ձեզ բավարարում է մատակարարվող ջրի որակը Are you satisfied with supplied water quality? | | | |
| Դասակարգել 1-5, որտեղ 1-ն ամենացածր, իսկ 5-ն ամենաբարձր ցուցանիշն է Classify 1-5, where 1is poorest and 5is the best water quality criteria | [] | Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer | [] |
| 23.Վերջին տարիներին Ձեր ընտանիքում եղել են արդյո՞ք ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների գրանցման դեպքեր Have any cases of water borne diseases been reported over the last years? | | | |
| Այո/Yes | | Ոչ /No | Դժվարանում եմ պատասխանել / Difficult to answer |
| 24. Ո՞ր ծառայության համար ավելի շատ եք վճարում What are the services you pay more? | | | |
| Բնական գազ Natural gas | Էլեկտրաէներգիա Electricity | Ջուր Water | |
| 25**. Արդյո՞ք միացած եք կենտրոնացված կոյուղու համակարգին Are you provided with centralized sewerage system? | | | |
| Այո/Yes | | Ոչ /No | Մասամբ/ partially |
| 26. Ինչ տիպի զուգարանից եք օգտվում / What type of lavatory do you use? | | | |
| Շիթով զուգարան բնակարանի ներսում Flash toilet in the flat | | Բակային չոր զուգարան/ Yard toilet | Այլ /Other |

Հավելված 2. Նկարներ սոցիոլոգիական և գեոդերային հարցումների, քննարկումների



բ.Դիլիջանում սոցհարցումների անցկացում



գ.Զորականում սոցհարցումների անցկացում



գ.Բագրատաշենում սոցհարցումների անցկացում

գ.Պտղավանում սոցհարցումների անցկացում